

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Խաչատուր ԲԱԲՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտ. ինստ. դոկտորանտ, տ.գ.թ.

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկ, առևտրային կազմակերպություն, ռիսկերի կառավարում, անվճարունակություն

Ներածություն: Ժամանակակից վերափոխվող տնտեսության պայմաններում հատուկ դերակատարում ունեն ճգնաժամային դրսևորումները և դրանցով պայմանավորված առաջացող ռիսկերը: Դրա հետ կապված հատուկ ուշադրության են արժանանում ֆինանսական գլոբալացման հիմնական գործոնները՝ կապիտալի ազատ տեղաշարժը, ֆինանսական շուկաները կարգավորող վերազգային կառույցները, ինչպես ֆինանսական հաստատությունների, այնպես էլ բանկային և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների միջև ազդեցության ոլորտի հետ կապված մրցակցության բարձրացումը, էլեկտրոնային տեխնոլոգիաների և ազգային ու տարածաշրջանային նոր ֆինանսական շուկաների զարգացման ձգտումը, բանկային գործունեության արժեթղթավորումը, ֆինանսական շուկաներում նորարարական գործընթացների աճը: Կազմակերպություններում ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումն անմիջական կախվածության մեջ է ռիսկ հասկացության բնութագրման հետ: Ընդհանրական տեսակետի համաձայն, ռիսկն առաջին հերթին հավանական իրադարձություն է, որը կարող է ազդել ինչպես բացասական, այնպես էլ դրական ձևով կազմակերպության գործունեության, մասնավորապես, նրա ֆինանսական արդյունքների վրա: Ֆինանսական ռիսկ հասկացության տակ ընկալվում է տնտեսավարող սուբյեկտի համար ուղղակի ֆինանսական կորուստների առաձայն հավանականությունը այս կամ այն իրադարձության արդյունքում: Առավել ընդհանուր իմաստով, ռիսկն իրադարձության առաջացման անորոշության հետևանք է, որն ուղղակի ֆինանսական կորուստներ է առաջացնում տնտեսավարող սուբյեկտի համար:

Մեթոդաբանություն: Ժամանակակից փուլում համաշխարհային մակարդակով ֆինանսական հարաբերությունների կառավարումն ամենաառաջնայիններից մեկն է համարում ռիսկերի վերահսկողությանն առնչվող խնդիրը: Անընդհատ կոշտացող մրցակցային պայքարում հաջողության կարող են


հասնել միայն այն կազմակերպությունները, որոնք կարողանում են վերահիշակել և արդյունավետ կառավարել իրենց ռիսկերը: Հարկ է նկատել, որ համաշխարհային ֆինանսական շուկայում գործում են որոշակի համբավ ունեցող ընկերություններ՝ Risk Metrics, BCG, EgarTechnology, որոնք մասնագիտացված են կորպորատիվ ռիսկերի կառավարման ոլորտում ծառայություններ մատուցելու մեջ, առաջարկելով տարաբնույթ կորիդատվություն, մեթոդաբանական մշակումներ և ծրագրային լուծումներ կոնկրետ ռիսկերի կառավարման ուղղությամբ: Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով էական նշանակություն ունի դրանց ներքին և արտաքին տեսակների դասակարգումը, ըստ որի էլ գործնականում մշակվում է վերահսկման մարտավարական լուծումներ՝ նպաստելով ընդհանուր ռազմավարական նպատակի ձեռքբերմանը: Մեր կողմից առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի արտաքին և ներքին տեսակների դասակարգումը հանգում է հետևյալին՝ *արտաքին ֆինանսական ռիսկեր*՝ արժեզրկման, արտարժույթի, տոկոսային, գնային, հարկային, ավանդային և *ներքին ֆինանսական ռիսկեր*՝ ֆինանսական կայունության, հաշվեկշռի իրացվելիության, անվճարունակության, գործարար ակտիվության, ծախսերի աճի, վարկային, սնանկության հավանական վտանգի:

Հաջորդ քայլում հիմք ընդունելով մեր կառուցած անվճարունակության ռիսկի (1) և (2) Logit-ռեգրեսիոն վերլուծության մոդելներն առաջարկում ենք առևտրային կազմակերպություններում ֆինանսական ներքին ռիսկերից անվճարունակության ռիսկի արդյունավետ կառավարումն իրականացնել ըստ թիվ 1 գծապատկերում ներկայացված ալգորիթմին համապատասխան: Վերլուծական մոտեցումներում անհրաժեշտություն է առաջանում գնահատել ֆինանսական կայունության փոխկապակցությունը ֆինանսական ռիսկերի հետ՝ համադրելով դրանց գնահատականները և կայացնել եզրակացություններ միջոցների ներգրավման քաղաքականության իրատեսականության վերաբերյալ: Դա իրականացնելու համար առաջարկում ենք ֆինանսական ռիսկերի գնահատման հետևյալ գործակիցների համախումբը՝

- Գ₁ = երկարաժամկետ պարտք/սեփական կապիտալ,
- Գ₂ = երկարաժամկետ պարտք/ընդհանուր պարտք,
- Գ₃ = համախառն ակտիվներ/սեփական կապիտալ,
- Գ₄ = ընդհանուր պարտք/սեփական կապիտալ,

$Գ_5 = (\text{վարկերի գծով ընդհանուր պարտք} + \text{ֆինանսական ծախսեր}) / \text{սեփական կապիտալ}$,

$Գ_6 = \text{շահույթը մինչև հարկումը} / (\text{վարկերի գծով ընդհանուր պարտք} + \text{ֆինանսական ծախսեր})$:



Գծապատկեր 1. Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ներքին՝ անվճարունակության ռիսկի արդյունավետ կառավարման ալգորիթմ

Գրականության ակնարկ: Կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է համակարգված, անընդհատ կրկնվող, նպատակային գործունեությունների կանխարգելիչ համալիր, որը կազմակերպվում է ֆինանսատնտեսական գործունեության իրականացման գործընթացում: Ըստ Խ.Աբասովայի տեսակետի [Абасова, 2013, с. 61-68]՝ կազմակերպություններում ռիսկերի կառավարման աշխատանքներն իրականացնում են որոկավորված մասնագետները՝ ֆինանսական կառավարիչները,

ռիսկ մենեջերները, որոնք տիրապետում են ռիսկերի կառավարման ոլորտում խորը գիտելիքների, ինչպես նաև մասնագետների արհեստավարժ ինստիտուտները կամ ավաիովահրական ընկերությունները, եթե կազմակերպությունում բացակայում են սեփական մասնագետները: Ըստ մեկ այլ հետազոտողի Ի.Բլանկի տեսակետի [Бланк, 2005, с. 30]՝ կազմակերպության ֆինանսական ռիսկերի կառավարումը ռիսկային ֆինանսական որոշումների, մեթոդների և սկզբունքների մշակման ու իրացման համակարգ է, որն ապահովում է տարբեր ֆինանսական ռիսկերի բազմակողմանի գնահատում և դրանց հավանական բացասական ֆինանսական հետևանքների չեզոքացում: Ռիսկերի կառավարման գործընթացում, ըստ Ե.Շոխինայի [Шохина, 2011, с. 68], կարևոր նշանակություն են ստանում հետևյալ հիմնական փուլերը.

- Առաջին փուլում դասակարգվում են կազմակերպության ռիսկերը,
- Երկրորդ փուլում վերլուծվում է ռիսկի աստիճանը և տրվում է դրա քանակական գնահատական,
- Երրորդ փուլում իրականացվում է ռիսկերի կառավարման կոնկրետ մեթոդների ընտրություն,
- Չորրորդ փուլում ընտրված մեթոդները գործարկվում են և կատարվում է ձեռք բերված արդյունքների գնահատում:

Ի. Բլանկն առաջարկել է ֆինանսական ռիսկերի կառավարման հետևյալ փուլերը [Бланк, 2005, с. 50]՝

- Առաջին փուլ՝ ֆինանսական ռիսկերի նույնականացում,
- Երկրորդ փուլ՝ կատարվում է ֆինանսական ռիսկերի որակական, քանակական և համալիր գնահատում և վերլուծություն,
- Երրորդ փուլ՝ ֆինանսական ռիսկերի կառավարման կոնկրետ մեթոդների ընտրություն և դրանց իրացում,
- Չորրորդ փուլ՝ ֆինանսական ռիսկերի մշտադիտարկում և վերահսկողություն, դրանց կառավարման արդյունավետության գնահատում:

Առևտրային կազմակերպություններում գործունեության հիմնական նըպատակը նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի՝ շահույթի ստացումն է, ինչը փաստում է դրանց գործունեության արդյունավետության մասին: Ըստ Ա.Շերեմետի և Ռ.Սայֆուլինի համատեղ տեսակետի [Шеремет, Сайфулин, 2000, с. 98]՝ արդյունավետությունը բարդ հասկացություն է, որը բնութագրվում է կազմակերպության գործունեության արդյունքայնությամբ և

նրա կապիտալի շահութաբերության, ռեսուրսներով կամ արտադրանքով: Ըստ Յու. Մայյարեվսկու տեսակետի [Маляревский, Тютюнник, 2003, с. 163]՝ տնտեսական արդյունավետությունը պատկերացում է տալիս, թե ինչպիսի գնով է կազմակերպությունը ստանում շահույթ, իսկ ծախսերի և արդյունքների համադրումը գործնականում օգտագործվում է տնտեսական որոշումների հիմնավորման համար: Տեսամեթոդական առումով գոյություն ունեն արդյունավետության կառավարման գնահատման մի քանի հիմնական մեթոդներ, որոնցից նշենք հետևյալները՝

- Նպատակային մոտեցում, ըստ որի գնահատվում է սահմանված նպատակների իրականացման աստիճանը, կախված ընդունված որոշումից որոշակի ծրագրերի կամ առաջադրանքների իրականացումը, պլանավորված տնտեսական ցուցանիշների կատարումը, կանխատեսումները,

- Ռեսուրսային մոտեցում, ըստ որի կառավարման արդյունավետության գնահատումը կատարվում է ռեսուրսների օգտագործման աստիճանից կախվածության համատեքստում: Տվյալ դեպքում ստացված արդյունքը համեմատվում է կատարված ծախսերի հետ,

- Կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատում, ըստ որի որոշակի փուլում դինամիկ կերպով գնահատվում են հիմնական ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև վերլուծվում են նորմատիվային և միջճյուղային ցուցանիշները, համեմատություններ կատարելով հիմնական մրցակիցների կամ գործունեության ճյուղի առաջատար կազմակերպությունների համանման ցուցանիշների հետ,

- Համալիր մոտեցում, որը համատեղում է տարբեր վարիացիաներով կառավարման արդյունավետության գնահատման վերը նշված երեք մոտեցումները:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով առաջարկում ենք հետևյալ փուլերը՝

1. Գործող կազմակերպությունում ֆինանսական ռիսկերի բացահայտում,

2. Բացահայտված ֆինանսական ռիսկերի քանակական ու որակական գնահատում և վերլուծություն,

3. Ֆինանսական ռիսկերի քանակական և որակական ցուցանիշների թույլատրելի սահմանային միջակայքերի որոշում,

4. Ֆինանսական ռիսկերի բացահայտված տեսակների վրա ներազդելու միջոցառումների համալիրի մշակում և ընդունվող որոշումների իրականացման գործնական գործողությունների ձեռնարկում,

5. Ֆինանսական ռիսկերի կառավարման գործող համակարգի փոխկապակցության կապում մակրոտնտեսական իրավիճակի մշտադիտարկում, վերահսկում և ազդեցությունների ճշգրտում:

Ֆինանսական կառավարման տեսամեթոդական ուղղությունների կատարելագործմանը համահունչ, ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում են նոր գործիքներ: Հետազոտողներից՝ Օ.Պոդկոպանը, իր տեսակետում [Подкопаяв, 2012, с. 83-84] կարևորել է կառավարման գործընթացը, ինչը հնարավորություն է ընձեռում կազմակերպությունում հաստատել կարգ ու կանոն և ներդնել գործընթացների բարելավման մեխանիզմ:

Վերլուծություն: Ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների համար հետազոտված ՀՀ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված արժեքները ներկայացրել ենք ստորև բերված թիվ 1, 2 և 3 աղյուսակներում:

Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների հաշվարկված գնահատականները ներկայացրել ենք թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1. Ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների դինամիկան Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ում

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Գ1	1.428	1.387	1.127	1.042	1.018	0.955	0.719	0.642	0.646	0.523	0.912
Գ2	0.798	0.785	0.779	0.697	0.748	0.766	0.766	0.772	0.69	0.511	0.666
Գ3	2.789	2.767	2.447	2.496	2.36	2.247	1.939	1.831	1.936	2.023	2.369
Գ4	1.789	1.767	1.447	1.496	1.36	1.247	0.939	0.831	0.936	1.023	1.369
Գ5	0.24	0.38	0.368	0.339	0.291	0.364	0.23	0.253	0.357	0.472	0.8
Գ6	0.154	0.231	0.378	-0.092	0.089	0.124	0.678	0.68	-0.037	0.012	-0.181

Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի համար 2010-2020թթ. կատարված վերլուծությունը ցույց է տալիս ֆինանսական ռիսկը բնութագրող մեր առաջարկված ցուցանիշների հետևյալ միտումների բացահայտումը.

Գ₁՝ երկարաժամկետ պարտք / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,945, առավելագույն արժեքը ընդունել է 2010թ. ին՝ 1,428, իսկ նվազագույն արժեք՝ ուսումնասիրված ժամանակահատվածում 2019թ.՝ 0,523:

Գ₂՝ երկարաժամկետ պարտք / ընդհանուր պարտք հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,725, առավելագույն արժեքը ընդունել է 2010թ.՝ 0,798 իսկ նվազագույն արժեք՝ 2019թ.՝ 0,511:

Գ₃՝ համախառն ակտիվներ / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 2,291 առավելագույն արժեքը ընդունել է 2010թ.՝ 2,789, իսկ նվազագույն արժեք՝ 2017թ.՝ 1,831:

Գ₄՝ ընդհանուր պարտք / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 1.291 առավելագույն արժեքը ընդունել է 2010թ.՝ 1.789, իսկ նվազագույն արժեք՝ 2017թ.՝ 0.831:

Գ₅՝ (վարկերի գծով ընդհանուր պարտք+ֆինանսական ծախսեր) / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,372 առավելագույն արժեքը ընդունել է 2020թ.՝ 0,8, իսկ նվազագույն արժեք՝ 2016թ.՝ 0,230:

Գ₆՝ շահույթը մինչև հարկումը / (վարկերի գծով ընդհանուր պարտք+ֆինանսական ծախսեր հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,185 առավելագույն արժեքը ընդունել է 2017թ. ին՝ 0,680, իսկ նվազագույն արժեք՝ 2020թ.՝ -0,181:

Ֆինանսական ռիսկերի ազդեցությունը Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի վրա հաշվարկված գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքների տեսանկյունից հնարավորություն է տալիս տարբերակել այս կազմակերպությունում որպես գործունեության կայուն ժամանակահատված գլխավորապես 2010-2011թթ., իսկ անկայուն՝ 2019թ., ինչն անմիջակահորեն կապված է COVID-19-ի ճգնաժամի հետ:

Մաքուր Երկաթի գործարան ԲԲԸ-ի ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների հաշվարկված գնահատականները ներկայացրել ենք թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2. Ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների դինամիկան Մաքուր Երկաթի գործարան ԲԲԸ-ում

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Գ1	0.005	0.007	0.006	0.006	0.009	0.005	0.046	0.046	0.06	0	0.009
Գ2	0.36	0.043	0.187	0.137	0.05	0.475	0.896	0.83	0.77	0	0.047
Գ3	1.015	1.162	1.033	1.044	1.174	1.01	1.051	1.055	1.078	1.032	1.196
Գ4	0.015	0.162	0.033	0.044	0.174	0.01	0.051	0.055	0.078	0.032	0.196
Գ5	0.002	0.152	0.001	0.027	0.156	0.001	0	0	0.001	0	0
Գ6	119.95	1.3	137.31	7.44	0.9	30.37	556.25	164.58	76.26	22398	51519

Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ-ի 2010-2020թթ. վերլուծությունը ցույց է տալիս ֆինանսական ռիսկը բնութագրող մեր կողմից առաջարկված ցուցանիշների վերաբերյալ հետևյալ միտումների բացահայտումը.

Գ₁' երկարաժամկետ պարտք / սեփական կապիտալ ցուցանիշով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,018, առավելագույն արժեքը ընդունել է 2018թ.՝ 0,06, իսկ նվազագույն արժեքը՝ 2019թ.՝ 0 :

Գ₂' երկարաժամկետ պարտք / ընդհանուր պարտք հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,345, առավելագույն արժեքը ընդունել է 2016թ.՝ 0,896, իսկ նվազագույն արժեքը՝ 2019թ.՝ 0 :

Գ₃' համախառն ակտիվներ / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 1,077 առավելագույն արժեքը ընդունել է 2020թ.՝ 1,196, իսկ նվազագույն արժեքը՝ 2015թ.՝ 1,010:

Գ₄' ընդհանուր պարտք / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,077 առավելագույն արժեքը ընդունել է 2020թ.՝ 0,196, իսկ նվազագույն արժեքը՝ 2015թ.՝ 0,010:

Գ₅' (վարկերի գծով ընդհանուր պարտք+ֆինանսական ծախսեր) / սեփական կապիտալ ցուցանիշով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 0,031 առավելագույն արժեքը ընդունել է 2014թ.՝ 0,156, իսկ նվազագույն արժեքը՝ 2016-2017, 2019-2020թթ.՝ 0:

Գ₆' շահույթը մինչև հարկումը / (վարկերի գծով ընդհանուր պարտք + ֆինանսական ծախսեր ցուցանիշով 2010-2020թթ. միջին արժեքը կազմել է 6819,255, առավելագույն արժեքը ընդունել է 2020թ.՝ 51519,47, իսկ նվազագույն արժեքը՝ 2014թ.՝ 0,903:

Ֆինանսական ռիսկերի ազդեցությունը Երևանի Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ-ի գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքների տեսանկյունից հնարավորություն է տալիս տարբերակել այս կազմակերպությունում որպես գործունեության կայուն ժամանակահատված 2014թ, 2018թ, 2020թ., իսկ անկայուն՝ 2015թ.՝ պայմանավորված ՀՀ դրամի 2014 թ. արժեզրկման բացասական հետևանքով և 2019թ.-ին՝ COVID-19-ի ճգնաժամով:

Պոռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ-ի ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների հաշվարկված գնահատականները ներկայացրել ենք թիվ 3 աղյուսակում:

Աղյուսակ 3. Ֆինանսական ռիսկերի գնահատման առաջարկված ցուցանիշների դինամիկան Պոռոշյանի կոնյակի գործարան ԲԲԸ-ում

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գ1	0.021	0.253	0.003	0.126	0.181	0.207	0.211	0.329	1.565	1.5
Գ2	0.023	0.456	0.011	0.424	0.357	0.301	0.23	0.195	0.823	0.875
Գ3	1.911	1.554	1.27	1.297	1.508	1.688	1.918	2.687	2.9	2.714
Գ4	0.911	0.554	0.27	0.297	0.508	0.688	0.918	1.687	1.9	1.714
Գ5	0.66	0.417	0.166	0.204	0.214	0.297	0.74	1.543	1.681	1.545
Գ6	0.175	0.412	0.66	0.458	1.73	0.169	0.165	0.166	0.2	0.186

Պոռոշյանի Կոնյակի գործարան ՍՊԸ-ի 2010-2019թթ. վերլուծությունը ցույց է տալիս ֆինանսական ռիսկը բնութագրող մեր առաջարկված ցուցանիշների վերաբերյալ հետևյալ միտումների բացահայտումը.

Գ₁՝ երկարաժամկետ պարտք / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2019թթ. միջին արժեքը կազմել է 0,440, առավելագույն արժեքը ընդունել է 2018թ.՝ 1,565, իսկ նվազագույն արժեք՝ ուսումնասիրված ժամանակահատվածում 2012թ.՝ 0,003 :

Գ₂՝ երկարաժամկետ պարտք / ընդհանուր պարտք հարաբերակցության առումով 2010-2019թթ. միջին արժեքը կազմել է 0,370, առավելագույն արժեքը ընդունել է 2019թ.՝ 0,875, իսկ նվազագույն արժեք՝ 2012թ.՝ 0,011 :

Գ₃՝ համախառն ակտիվներ / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2019թթ. միջին արժեքը կազմել է 1,945, առավելագույն արժեքը ընդունել է 2018թ.՝ 2,9, իսկ նվազագույն արժեք՝ 2012թ.՝ 1,27:

Գ₄՝ ընդհանուր պարտք / սեփական կապիտալ ցուցանիշով 2010-2019 թթ. միջինը 0,945, առավելագույնը 2018թ.՝ 1,9, նվազագույնը՝ 2012թ.՝ 0,27:

Գ₅' (վարկերի գծով ընդհանուր պարտք+ֆինանսական ծախսեր) / սեփական կապիտալ հարաբերակցության առումով 2010-2019թթ. միջին արժեքը կազմել է 0,747 առավելագույն արժեք ընդունել է 2018թ՝ 1,681, իսկ նվազագույն արժեք՝ 2012թ.՝ 0,166 :

Գ₆' շահույթը մինչև հարկումը / (վարկերի գծով ընդհանուր պարտք+ֆինանսական ծախսեր հարաբերակցության առումով 2010-2019թթ. միջին արժեքը կազմել է 0,432, առավելագույն արժեք ընդունել է 2014թ.՝ 1,73, իսկ նվազագույն արժեք՝ 2016թ.՝ 0,165:

Ֆինանսական ռիսկերի ազդեցությունը Պոռշյանի Կոնյակի գործարան ՍՊԸ-ի գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքների տեսանկյունից հնարավորություն է տալիս տարբերակել որպես գործունեության կայուն ժամանակահատված գլխավորապես 2018թ, իսկ անկայուն 2012թ.՝ պայմանավորված գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի դեռևս շարունակված բացասական դրսևորումներով:

Մեր կարծիքով, ներկա փուլում առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման արդյունավետ ուղիներից է ռիսկերի կառավարման համալիր մոտեցումը, որը հնարավորություն է ընձեռում դիտարկել այդ գործընթացը, որպես կազմակերպության ընդհանուր կառավարման մաս:

Ելնելով կոնկրետ կազմակերպության ճյուղային պատկանելիությունից, ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգը նպատակաուղղվում է մի շարք խնդիրների լուծմանը, որոնցից ընդհանրականները հետևյալն են՝

- Ֆինանսական ռեսուրսների գնագոյացումը,
- Փոխարժեքի տատանմամբ՝ արտարժույթային ռիսկի մեղմումը,
- Սղաճի ազդեցությամբ՝ բացասական դրսևորումների կանխարգելումը,
- Հարկազանձման մեխանիզմով՝ ռիսկի կանխարգելումը,
- Ավանդային տոկոսադրույքների փոփոխմամբ՝ ռիսկի կառավարումը,
- Իրացվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,
- Պաշարների կառավարման համակարգի բարելավումը,
- Նորամուծությունների հաշվին աշխատանքի արտադրողականության բարձրացումը,

- Հիմնական արտադրատեսակների գծով ինքնարժեքի իջեցումը,
- Ընդհանուր գործառնական փուլի կատարելագործումը:

Մասնավորապես, որոշ հիմնական ռիսկերի գծով կարևորում ենք հետևյալ միջոցառումները՝

- Գնային ռիսկի քանակական գնահատման հիմնական մեթոդ համարվում է EaR-ը՝ որոշակի հավանականությամբ արժեքի հավանական առավելագույն նվազման գնահատման մեթոդը: Այն հնարավորություն է ընձեռում հաշվարկել որոշակի ժամկետում պլանավորված իրացումից հասույթի փաստացի և պլանային մեծությունների շեղումը: Այլ մեթոդներից կարևորվում են՝

- Շուկայական գնի ձևավորման և արտադրության ծախսերի վերահիշկման հետ կապված: Դա պայմանավորած է այն հանգամանքով, որ շուկայական գինը որոշվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, որի կարգավորիչ մի կողմից կլինի ապագայում սպասվող շահույթը, իսկ մյուս կողմից՝ արտադրական ծախսերը: Եթե առաջարկը գերազանցի պահանջարկը, ապա արտադրող կազմակերպությունը ստիպված է գնալ գների նվազեցման, ինչը արտադրության ծախսերը փոխհատուցելու խնդիր է առաջացնում,

- Մարքեթինգային հետազոտություններով պայմանավորված, որպեսզի հնարավոր լինի խուսափել այնպիսի նախագծերից, որոնց ետգնման ժամկետը բավականին երկար է,

- Ֆինանսական քաղաքականության բարելավմամբ պայմանավորված, որի շրջանակներում կարևորվում է դրամական հոսքերի կառավարման օպտիմալացումը, դեբիտորական պարտքերի հավաքագրելիության արդյունավետության բարձրացումը, կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հաշվին լրացուցիչ եկամուտների սինթեզման հնարավորությունը,

- Նորամուծություններով պայմանավորված՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Արտարժույթային ռիսկի կառավարումն արդյունավետ է իրականացնել հետևյալ մեթոդների օգնությամբ՝

- Կազմակերպության արտարժույթի աստիճանավորմամբ (դիվերսիֆիկացիա), հատկապես, եթե կազմակերպությունը մի քանի արժույթներով ունենում է հումքի գնումներ, արտահանման դեպքում թողարկված արտադրանքի իրացում,

- Արտարժույթի փոխարժեքի լայն տատանումների դեպքում արտարժույթի լիմիտային օգտագործումը,

- Որոշակի արժույթով արտահանման գործառնությունների գծով պայմանագրային սահմանափակում,

- Արտարժույթային ռիսկի հեջավորման գործիքների կիրառում:

Տոկոսային ռիսկի կառավարման արդյունավետ մեթոդներ են՝

- Կազմակերպությունում ներդրումների աստիճանավորումը,

- Բարձր տոկոսադրույքով վարկերի օգտագործման սահմանափակումը,

- Անվստահելի գործընկերներին երկարաժամկետ փոխառությունների և առևտրային վարկով իրացման պայմանագրային սահմանափակումը,

- Ֆակտորինգի օգտագործումը,

- Գործընկեր կազմակերպության վճարունակության գնահատումը:

Ավանդային ռիսկի կառավարման հիմնական մեթոդ համարվում է առևտրային բանկերի վարկանիշներին հետևելը և առաջարկվող ավանդային տոկոսադրույքների մակարդակը: Հարկային ռիսկի դրսևորումները կապված են հարկային օրենսդրությամբ առկա փոփոխություններով, որոնք էական ազդեցություն ունեն կազմակերպության վճարունակության վրա: Ուստի, այս ռիսկի կառավարման տեսանկյունից, ժամանակակից պայմաններում հատուկ կարևորություն է տրվում հարկային պլանավորմանը:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կայունության, իրացվելիության, անվճարունակության ռիսկերի կառավարումը նպատակահարմար է դիտարկել ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգի շրջանակներում՝ փոխկապակցելով նաև սնանկության հավանական վտանգի ռիսկի կառավարման գործընթացը: Գործնականում ֆինանսական կայունության ռիսկի և դրա հետ փոխկապակցված իրացվելիության, անվճարունակության ու սնանկության հավանական ռիսկերի արդյունավետ կառավարումը հնարավոր է դառնում գնային ռիսկի կապի համատեքստում ձեռնարկվող միջոցառումների իրացմամբ: Այս առումով մեթոդաբանական տեսանկյունից նախընտրելի է VAR մեթոդի օգտագործումը, ինչպես նաև Գորդոնի և Մարկովիչի առաջարկած մոտեցումները:

Մասնավորապես, ֆինանսական կայունության, իրացվելիության և անվճարունակության ռիսկերը մեղմելու համար անհրաժեշտ է առաջին հերթին

ձևավորել սեփական ընթացիկ ակտիվների դրական մնացորդ, կրեդիտորական և դեբիտորական պարտքերի հաշվեկշռվածություն, իրականացնելով՝

- Սահմանափակելով առևտրային վարկով իրացումը և զուգահեռ ավելացնելով գնումների գծով կրեդիտորական պարտքերը վճարման ժամկետների որոշակի երկարաձգմամբ,
- Սահմանափակել մեծ ծավալով և բարձր գնով վարկային միջոցների ներգրավումը,
- Հնարավորության սահմաններում հասնել հաստատուն ծախսերի որոշակի նվազեցման,
- Հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների ձեռքբերման գների նվազեցման, ինչպես նաև դրանց ձեռքբերման մեծ ծավալների դեպքում զեղչեր ստանալու նպատակով կատարել մատակարարների ընտրություն,
- Ընթացիկ ֆինանսական պահանջը կարգավորելու համար օգտագործել ֆակտորինգը:

Ծախսերի աճի ռիսկը ցանկացած կազմակերպության համար համարվում է հիմնականներից, որի վերահսկողության համար այդ ռիսկի գնահատմամբ զբաղվող մասնագետները պետք է վերլուծեն վաճառքի շահութաբերությունը կազմակերպության կողմից իրականացվող բոլոր նախագծերի գծով, որպեսզի հնարավորինս խուսափեն վնասաբեր նախագծերից:

Յուրաքանչյուր առևտրային կազմակերպությունում ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմամբ խնդիր է դրվում հնարավորինս նվազեցնել անցանկալի իրավիճակների և դրանով պայմանավորված հավանական ֆինանսական կորուստների հավանականությունը: Ցանկալի արդյունքն ակնկալվող դրամական հոսքերի և դրանց հավանական չստացումների տատանման կրճատումն է, ինչը գործնականում հնարավոր է լինում ապահովել ռիսկերի կառավարման համակարգային մոտեցման դեպքում:

Եզրակացություններ: Ներկա փուլում ՀՀ-ում ռիսկերի կառավարման գործընթացի կարևոր տարր պետք է հանդիսանա ներդրումային ընկերությունների կողմից կորպորատիվ կառավարման և ներքին վերահսկողության համակարգերի կառուցումը բոլոր տեսակի ֆինանսական ռիսկերն առավել արդյունավետ կառավարելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով ներդրումային գործունեության ավտոմատացման մակարդակի բարձրացումը,

հատկապես ինտերնետ առևտրի դերի բարձրացումը, տեղեկատվական վերլուծական համակարգերի զարգացումը, այդ թվում հեռահար, պահանջում են հատուկ ուշադրության արժանացնել ռիսկի գործոնին: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել ավտոմատացված համակարգերի հուսալիության ապահովման, դրանց կրկնօրինակման, ինչպես նաև վերջիններիս անխափան գործունեության վերականգնման արդյունավետ ծրագրերի մշակման խնդիրներին:

« առևտրային կազմակերպություններում, ընդհանուր առմամբ, ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման համար կարևոր են հետևյալ միջոցառումները՝

- Առաջադեմ տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրումը, ինչը կոնկրետ կազմակերպությունում կնպատակաուղղվի արտադրության արտադրողականության մակարդակի բարձրացմանը և տեխնիկական ապահովվածությանը, որոնք կոչված կլինեն նվազեցնելու արտադրության ռիսկերը,

- Արտադրական կազմակերպություններում արտադրության հզորությունների օպտիմալացում և վերակառուցում, ինչը թույլ կտա նվազեցնել արտադրության խափանումները և տեխնոլոգիական ռիսկերի դրսևորումները,

- Պահուստների ձևավորման ինքնաապահովագրումը,

- Ֆինանսական կառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված առաջադեմ մեթոդների ներդրում, ինչը հնարավորություն կընձեռի հնարավորինս նվազեցնել բացասական դրսևորումները կառավարչական որոշումների որակի վրա,

- Երկարաժամկետ ներդրումների և դրամաշնորհների ներգրավում, որը կնպատակաուղղվի կազմակերպության դրամական շրջանառության կարգավորմանը և ֆինանսական ռիսկերի նվազեցմանը,

- Թվային տեխնոլոգիաների ներդրմանը համահունչ անձնակազմի վերապատրաստում, կադրային ռեզերվի ստեղծում, ինչը թույլ կտա արդյունավետ կառավարել տվյալ կազմակերպությունում կադրային ռիսկը:

Նշվածով հանդերձ, հատկապես COVID-19-ի և Արցախյան պատերազմի բացասական հետևանքներով պայմանավորված, ճգնաժամային դրսևորումները հաղթահարելու գործում « առևտրային կազմակերպությունների համար կարևոր նշանակություն կունենա պետական օգնության և օժանդակության միջոցառումները, որոնց վերաբերյալ համապատասխան լուծումներ մեր

կողմից առաջարկվել են սույն հետազոտության շրջանակներում քննարկված «առևտրային կազմակերպությունների պետական օժանդակության կատարելագործման ուղիների դերը կապիտալի կառուցվածքային փոփոխությունների համատեքստում» ենթահարցում:

Գրականության ցանկ

1. Абасова, Х.А. Характеристика финансовых рисков и их особенности в нефтяной промышленности // Финансы и кредит. 2013. №9. С.61-68.
2. Бланк, И.А. Управление финансовыми рисками. М.: НИКА-ЦЕНТР, 2005. С. 30.
3. Финансовый менеджмент / Под ред. Е.И. Шохина. М.: КНОРУС, 2011. С. 68.
4. Бланк, И.А. Управление финансовыми рисками. М.: НИКА-ЦЕНТР, 2005. С. 51.
5. Шеремет, А. Методика финансового анализа. М.: ИНФРА, 2000. С. 98.
6. Малыревский, Ю.Д. Финансовый учет. М.: ИНЖЭК, 2003. С. 163.
7. Подкопаев, О.А. Теоретические и практические аспекты исследования систем управления финансовыми рисками. М.: Вестник СамГУПС, 2012. С.83-84.

Խաչատուր ԲԱԲՅԱՆ

Ֆինանսական ռիսկերի կառավարման բարելավման ուղիներն առևտրային կազմակերպություններում

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկ, առևտրային կազմակերպություն, ռիսկերի կառավարում, անվճարունակություն

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման առաջնային խնդիրներից էական նշանակություն ունեն ֆինանսական ռիսկերի արդյունավետ վերահսկողության վերաբերյալ փնտրվող լուծումները: Համաշխարհային տնտեսության մեջ վերջին տասնամյակներում անընդհատ տեղի ունեցող ճգնաժամային դրսևորումներն իրենց բացասական հետևանքներով էապես խորացրել են և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում առևտրային կազմակերպությունների գործունեության ընթացքում ֆինանսական ռիսկերը, արդյունքում ժամանակի պահանջներին և վերափոխվող տնտեսական միջավայրի պայմաններին համապատասխան, անհրաժեշտություն է առաջանում նոր լուծումներ առաջարկել առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի մեղման և արդյունավետ վերահսկողության համար: 2019թ. համավարակն առևտրային կազմակերպությունների մոտ խորացրեց անվճարունակության ռիսկը, որը ժամանակին չկանխարգելու դեպքում կարող է ունենալ բավականին անցանկալի հետևանքներ, ինչը սոցիալ-տնտեսական առումով ձեռնտու չէ կոնկրետ շահառուներին, առաջին հերթին պետությանը և կազմակերպության սեփականատերերին: Սույն հոդվածի շրջանակներում, մեր կողմից առաջարկվել են ՀՀ առևտրային կազմակերպություններում ներկա փուլում ֆինանսական ռիսկերի կառավարման բարելավման ուղիներ:

Хачатур БАБОЯН

Пути улучшения управления финансовыми рисками в торговых организациях

Ключевые слова: финансовый риск, коммерческая организация, управление рисками, неплатёжеспособность

Решения для эффективного контроля финансовых рисков - одна из главных задач финансового менеджмента в коммерческих организациях. Постоянные кризисные проявления в мировой экономике в последних десятилетиях с их негативными последствиями значительно увеличили финансовые риски в ходе деятельности коммерческих организаций как в развитых, так и в развивающихся странах, в результате чего, по велению времени и в соответствии с условиями меняющейся экономической среды возникает необходимость выдвигать новые решения по снижению и эффективному контролю финансовых рисков в коммерческих организациях. Ситуация, связанная с пандемией COVID-19 повысила риск неплатежеспособности в коммерческих организациях, и если вовремя его не предотвратить, то могут возникнуть весьма нежелательные последствия, которые в социально-экономическом плане не выгодны конкретным бенефициарам, в первую очередь государству и владельцам организаций. В рамках данной статьи мы предлагаем пути совершенствования управления финансовыми рисками в коммерческих организациях РА на текущем этапе.

Khachatur BABOYAN

Ways to improve financial risk management in trade organizations

Key words: financial risk, commercial organization, risk management, insolvency

Finding solutions for the effective control of financial risks is one of the primary issues of financial management in commercial organizations. The ongoing crisis manifestations in the world economy in recent decades and their negative consequences have significantly increased the financial risks during the activities of commercial organizations in both developed and developing countries, and as the imperative of the time and the changing economic environment show, there occurs a need to propose new solutions for mitigation and effective control of financial risks in a commercial organization. The pandemic situation in 2019 deepened the risk of insolvency in commercial organizations, which, if not prevented in time, may have quite undesirable consequences, which are not socio-economically beneficial to specific beneficiaries, first of all to the states and owners of organizations. In this article, we put forward ways to improve the financial risk management in commercial organizations in the Republic of Armenia at the current stage.